

11502



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան



«17» 10 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 219 - 24

Նախաձեռնող՝

«Շինվեկտոր» ՍՊԸ
ք. Երևան, Հր. Քոչարի 16/6

Գործունեությունը՝

Լորուր բնակավայրի կրթահամալիրի կառուցում
Լոռու մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՐՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 219 - 24

«17» հոկտեմբերի 2024թ.

**Լոռու մարզի Թումանյան համայնքի Լորուտ բնակավայրի կրթահամալիրի կառուցման
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«Շինվեկտոր» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ, Թումանյան համայնք, Լորուտ բնակավայր

Ներածական մաս. «Շինվեկտոր» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Լորուտ բնակավայրում կառուցել կրթահամալիր:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Տարածքի ընդհանուր մակերեսն ըստ սեփականության իրավունքի գրանցման N 21042023-06-0051 և N 21042023-06-0050 վկայականների՝ կազմում է 2.04427 հա և 0.21484 հա, ընդհանուր՝ 2.2591 հա:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Թումանյան համայնքի Լորուտ բնակավայրի 2-րդ փողոցի թիվ 2/1 հասցեում: Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տարածքը գտնվում է Լոռու մարզում՝ Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանում, Մարց գետի աջափնյա լանջին: Համաձայն ներկայացված ինժեներատեխնիկական



ուումնասիրության արդյունքների՝ տեղամասում իրականացված հորատման աշխատանքների ընթացքում՝ մինչև 10.0 մետր խորությամբ, գրունտային ջրեր չեն բացահայտվել:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Նախատեսվում է կառուցել տիպային կրթահամալիր՝ 200 աշակերտի համար դպրոց և մանկապարտեզ՝ 40 երեխայի համար: Կրթահամալիրն իրենից ներկայացնում է երեք իրար կցված շենքեր՝ երկհարկանի հիմնական դպրոցի, մարզադահլիճի, հանդիսությունների դահլիճի մասնաշենքերից և մեկ հարկանի մանկապարտեզից:

Կրթահամալիրը բաղկացած կլինի երկու վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկերից: Կրթահամալիրը բաղկացած կլինի երկու մասից՝ դպրոց և մանկապարտեզ, որոնք համապատասխանաբար կունենան պահակակետ, դասասենյակներ, քիմիայի և ֆիզիկայի կաբինետ, օժանդակ սենյակներ, տնօրենի կաբինետ, բժշկի կաբինետներ, մարզիչի սենյակ, տղաների և աղջիկների հանդերձարաններ, պահոցներ, մարզասրահ, սպորտային գույքի պահեստ, բեմ, տղաների, աղջիկների, հաշմանդամների, աշխատակիցների համար նախատեսված սանհանգույց, բուֆետ, խոհանոց, ուսմասվարի սենյակ, ուսուցչանոց, ռոբոտատեխնիկայի դասասենյակ, ռազմագիտության, ինֆորմատիկայի կաբինետ, գրադարան, բուժկետ, դաստիարակների սենյակ, հանդիսությունների դահլիճ և այլն:

Դպրոցի մասնաշենքը կլինի ուղղանկյունաձև՝ 43.8 մx20.4 մ առանցքային չափերով: Շենքը կլինի 2 հարկանի, 2-:-6 առանցքներում կունենա նկուղային հարկ, որը կծառայի որպես պարզագույն թաքստոց: Հարկերի բարձրությունը 1-:-9 առանցքներում կլինի 3.30 մ: Առաջին հարկի երկու կողմերում նախատեսված են դասասենյակներ, կաբինետներ, բուֆետ, երկրորդ հարկում՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի սենյակ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության դասասենյակ, ռոբոտատեխնիկայի սենյակ, ուսուցչանոց:

Դպրոցի մասնաշենքում նախագծվել է նկուղային հարկ՝ 21.6 մx20.4 մ, որն օգտագործվելու է որպես թաքստոց: Նկուղային հարկում կլինի գրադարանը, երկու դասասենյակ, խոհանոցը, բուժկետը, պահոցները, տղաների և աղջիկների սանհանգույցները, ջրի ռեզերվուար, կաթսայատուն, կոյուղու պոմպարան: Թաքստոց տանող աստիճանը հագեցած կլինի աստիճանային ամբարձիչով՝ հաշմանդամների համար: Շինության բոլոր հարկերն իրար հետ կապված կլինեն աստիճանների միջոցով, կունենան նաև հաշմանդամների համար նախատեսված հարկերը կապող միջհարկային ամբարձիչ:

Գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ՝ դպրոցական բացօթյա միջոցառումների համար:

Մանկապարտեզի մասնաշենքը կլինի ուղղանկյունաձև՝ 13.6 մx24.2 մ առանցքային չափերով: Այն կլինի 2 հարկանի, հարկերի բարձրությունը կլինի 3.30 մ: Նախատեսված է երկու խմբի համար և միջանցքով կապված կլինի դպրոցի մասնաշենքի հետ: Առաջին հարկում տեղադրված կլինեն հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, ննջասենյակներ, վարիչի, բժշկի և դայակների սենյակներ:

Հանդիսությունների դահլիճը նախատեսված է 144 հոգու համար: Մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսվում է 60 տեղանոց տրիբունա: Մարզադահլիճի առանցքային չափերն են՝ 24.7 մx18.0 մ:

Տարածքում նախատեսված է 4.0 մx8.0 մ չափերով ջերմոց՝ երեխաներին օգնության համար տնտեսությանը ծանոթացնելու և հողային աշխատանքներում ներգրավելու նպատակով: 26x4մ



չափերով բաց ցանկապատված մարզադաշտ, 100 մ երկարություն ունեցող վազքուղի, տնտեսական բաք, ավտոկայանատեղի:

Նախագծով նախատեսվում է 127.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում նոր կառուցվող շինության հարակից տարածքում:

Էլեկտրամատակարարումը կիրականացվի՝ համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի:

Շահագործման փուլում կրթահամալիրի ջրամատակարարման համակարգը միացվելու է համայնքային ջրատարին, իսկ ջրահեռացման համակարգը՝ մաքրման կայանին:

Գազամատակարարում չի նախատեսվում:

Համալիրն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով, ապահովվելու է համակցում 911 մոնիթորինգային համակարգին՝ համապատասխան տեխնիկական և ընդհանուր դրույթներով: Ավտոկայանատեղիները նախատեսվում են վերգետնյա: Նախատեսվում է հարկերի միջանցքներում ծխահեռացում՝ տանիքում տեղադրվող օդանուղների միջոցով: Նախատեսվում է հրդեհամարման նպատակով տեղադրել կրակմարիչներ, հակահրդեհային ազդասարքեր: Շենքերն ապահովված են լինելու էվակուացիոն ելքերով:

Կատարվելու են քանդման աշխատանքներ՝ մեխանիզմով և ձեռքով, առանց պայթեցման, փուլ առ փուլ: Ապամոնտաժումից առաջացած և հետագայում օգտագործման համար պիտանի նյութերը՝ որպես երկրորդային շինանյութեր, կտեղափոխվեն կապալառուի բազա և կօգտագործվեն կապալառուի կողմից՝ այլ շինարարական աշխատանքներում:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի մակերես՝ 2.2591 հա (100 %),
- կառուցապատման մակերես՝ 2115.9 քմ (9.36 %),
- կանաչապատման մակերես՝ 17245.50 քմ (75 %), որից բաց սպորտհրապարակ՝ 540 քմ,
- անջրանցիկ մակերես՝ 3229.70 քմ (15.64 %),
- մարզադահլիճ՝ 24.7մx18.0մ չափերով
- նկուղային հարկ՝ 21.6x20.4մ չափերի
- ավտոկայանատեղի՝ 5 մեքենայի համար:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը կկազմի՝ 6000 խմ, որից հետլիցքը՝ 2250 խմ, մնացած 3000 խմ քանակով հողը կկուտակվի տարածքում և կհեռացվի 15 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր՝ համաձայն Թումանյանի համայնքապետարանի կողմից տրված շինթույլտվության պահանջներին: Տարածքում առկա է 750 խմ ծավալով բուսահող:

Տարածքում առկա են ծառեր՝ 50 հատ, թփեր և խոտածածկ տարածք: Նախատեսվում է շուրջ 20 ծառի հատում, որոնք համաձայն կանաչապատման նախագծի վերականգնվելու են 1/2 և ավել հարաբերակցությամբ (նախատեսվում է տնկել 157 ծառ): Տարածքում առկա է բուսահող, որը պահվելու է տեղում և օգտագործվելու է տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքների համար:

Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում կապված՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխազազերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի



տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ, ինչպես նաև աշխատանքի անվտանգության հետ, որոնք կլինեն կարճաժամկետ:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է բացառել տարածքում թափոնների բաց այրումը, անհրաժեշտ է շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի վրացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Հողային ռեսուրսների պահպանության համար ձեռնարկվելու են միջոցառումներ, որոնք կբացառեն բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում՝ դրա որակական հատկանիշների վատթարացումը: Հողի բերրի շերտն օգտահանվելու է և պահեստավորվելու է առանձին՝ անջրթափանց թաղանթով, կատարվելու է խախտված հողերի վերականգում, շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային բուսահողն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա, ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում, դրանց լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում: Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է բետոն կամ մանրախիճ, մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փոված մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր՝ փոխարինելով նորով:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է փոշենստեցման համար կատարել ջրցան՝ ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր: Անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող բիոզուգարան: Ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում գործունեության տարածքը և շրջակա միջավայրը անհրաժեշտ է զերծ պահել թափոնների կուտակումներից, քանդման արդյունքում առաջացած թափոնները տեսակավորել, առանձնացնել, առանձին թափոնատեսակները՝ մետաղական մասեր, փայտի մնացորդներ, տանիքի ծածկ և այլն, հանձնել համապատասխան մասնագիտական կազմակերպություններին, առանձին պիտանելի թափոններն օգտագործվելու են շինարարության փուլում, շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, մետաղական մասերը կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով: Կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց



պղիեթիլենային թաղանթով, բացառվելու է աղբի կուտակումը շիրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում, շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը /տոսնձի, ներկի մնացորդներ/ և այլն հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են կապալառուի կողմից:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով, բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ, և այլն:

Դպրոցի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով, ինչը նաև կնպաստի խուսափել նախագծային անհամապատասխանություններից,
- համապատասխան պայմանագրերի՝ թափոնների տեղափոխման վերահսկում,
- կապալառուի կողմից նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացման վերահսկում,
- շինտեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով,
- բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացման վերահսկում՝ ապահովելով կանաչապատ տարածքի համապատասխանությունը կանաչապատման նախագծին, կանաչ զանգվածի վիճակի մշտադիտարկում, ծառերի կաչողականության ուսումնասիրություն՝ ծառերի աճն ապահովելու նպատակով:

Հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը կկազմի մոտ 2 մլն 300 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Գնահատման հաշվետվության և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Լոռու մարզի Թումանյան համայնքի Լորուտ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսման ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Լոռու մարզպետարանից, Թումանյանի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:



Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:
2. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
4. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
5. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
6. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Շինվեկտոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Թումանյան համայնքի Լորուտ բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝

Սվետլանա Կիզիրյան

